

ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանի 2010թ. մայիս ամսվա հաշվետվություն

Ելույթներ ԱԺ ամբիոնից

- 17.05 Գազալցակայաններին արտոնություններ տալու եւ «Հաստատագրված վճարների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի անընդունելի լինելու, կառավարության վարած հարկային ու մաքսային քաղաքականության մասին:
- 18.05 «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:
- 18.05 «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ, մասնավորապես՝ մամուլի ազատության եւ նախագծով նախատեսված դրա սահմանափակման մասին:
- 19.05 «Ժառանգություն» խմբակցության տեսակետը՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:

Հարցեր ԱԺ ամբիոնից

- 17.05 «Հաստատագրված վճարների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ:
- 18.05 «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:
- 19.05 Հարց Կառավարությանը՝ գնաճի վերաբերյալ:
- 20.05 Կենտրոնական բանկի գործունեության եւ նրա վարած քաղաքականության մասին:
- 20.05 Կենտրոնական բանկի վարած քաղաքականության մասին:

Հայտարարություններ

- 18.05 «Հաստատագրված վճարների մասին» օրենքի նախագծի, գազալցակայանների տերերի հարկային պարտավորություններից խուսափելու, Կառավարության վարած հարկային սխալ քաղաքականության, կեսաթոշակների եւ սոցիալապես անապահով խավերի աղքատության չափերի մասին:

Որպես հիմնական զեկուցող

Մայիսի 18-ին Արմեն Մարտիրոսյանը Ազգային ժողովի բառօրյա նիստերի աշխատանքների ընթացքում հանդես եկավ իր հեղինակած «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ հիմնական զեկուցմամբ:

Սեմինար-քննարկումներ

- 03.05 Արմեն Մարտիրոսյանը Ազգային ժողովի Առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողովում մասնակցեց Ախտաբանա-անատոմիական հետազոտության հիմնախնդիրների օրենսդրական կարգավորման վերաբերյալ քննարկմանը:
- 07.05 Արմեն Մարտիրոսյանը Էրեբունի հյուրանոցում մասնակցեց ՀՀԴ ՀԱՅ ԴԱՏԻ հանձնախմբի հերթական խորհրդաժողովի բացման հանդիսավոր նիստին:
- 14.05 Արմեն Մարտիրոսյանը մասնակցեց Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստին, որտեղ քննարկվեցին Արմեն Մարտիրոսյանի համահեղինակած «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերը:

- 14.05 Արմեն Մարտիրոսյանը մասնակցեց Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստին:
- 21.05 Արմեն Մարտիրոսյանը Արմենիա Մարիոթ հյուրանոցում մասնակցեց «Կովկաս 2009» միջազգային գիտաժողովին:
- 22.05 Արմեն Մարտիրոսյանը Արմենիա Մարիոթ հյուրանոցում մասնակցեց «Կովկաս 2009» միջազգային գիտաժողովին:
- 26.05 Արմեն Մարտիրոսյանը Կովկասի ինստիտուտում մասնակցեց «Ֆինանսական համակարգ եւ տնտեսական զարգացում» թեմայով գիտաժողովին:
- 26.05 Արմեն Մարտիրոսյանը մասնակցեց Ազգային ժողովի Առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի եւ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստին:

Հանդիպումներ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ

- 13.05 Արմեն Մարտիրոսյանը «Ժառանգություն» խմբակցության պատգամավորների հետ Ազգային ժողովի Կարմիր դահլիճում հանդիպեց Մելուք Չավուշօղլուի հետ:
- 24.05 Արմեն Մարտիրոսյանը խմբակցության պատգամավորների հետ Ազգային ժողովում հանդիպեց ԱՄՍ փորձագետ Ֆրեյդ Ռեդլիի եւ Աննա Յովհաննիսյանի հետ, քննարկում եղավ «ՀՀ ԱԺ-ի կարիքների գնահատում, հանձնաժողովների աշխատանքների արդյունավետության բարձրացում» թեմայով:

Հանդիպումներ եւ այցելություններ

- 09.05 Արմեն Մարտիրոսյանը Ազգային ժողովի պատվիրակության կազմում մեկնեց ԼՂՀ, մասնակցեց ԼՂՀ հաղթանակի տոնին նվիրված միջոցառումներին:
- 12.05 Արմեն Մարտիրոսյանը մասնակցեց «Օրրանը 10 տարեկան է» հանդիսությանը:
- 14.05 Արմեն Մարտիրոսյանը եւ Լարիսա Ալավերդյանը Արամ Խաչատրյան համերգասրահում ներկա գտնվեցին դասական երաժշտության երեկոյի:
- 15.05 «Ժառանգություն» կուսակցության վարչության նախագահ Արմեն Մարտիրոսյանը, վարչության անդամներ Անահիտ Բախշյանը եւ Հայկ Գասպարյանը, կուսակցության Արմավիրի ստորաբաժանման ղեկավար Գագիկ Մարգարյանը, ինչպես նաեւ օրերս կուսակցությանն անդամագրված Ռուբեն Հակոբյանը հանդիպումներ ունեցան Արմավիրի մարզի քաղաքացիների հետ:
- 26.05 Արմեն Մարտիրոսյանը Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տանը մասնակցեց Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի 10-ամյա հոբելյանին նվիրված տոնական համերգին:
- 29.05 Արմեն Մարտիրոսյանը Գերմանիայի Բունդեսբազի անդամ, Բունդեսբազի գերմանահարավկովկասյան պատգամավորական խմբի փոխնախագահ եւ ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի անդամ Միխայել Լինկի այցելության առթիվ Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Ֆրիդրիխ Նաունմանի հրավերով մասնակցեց ճաշի՝ Արմենիա Մարիոթ հյուրանոցում:

Գործուղումներ

- 08.05- Ազգային ժողովի պատվիրակության կազմում Արմեն Մարտիրոսյանի այցը ԼՂՀ:
- 10.05

ՉԼՍ-ներ

Մայիսի 20-ին Արմեն Մարտիրոսյանը հարցազրույց ունեցավ ֆրանսիական «Այբֆե» ռադիոյի թղթակցի հետ՝ Ազգային ժողովի գործունեության վերաբերյալ:

Մայիսի 29-ին Արմեն Մարտիրոսյանը հարցազրույց ունեցավ Գյումրիի «Գալա» հեռուստաընկերությանը:

Խորհրդարանական ժամ

02.05 Արմեն Մարտիրոսյանը Հանրային հեռուստաընկերության «Խորհրդարանական ժամ» հեռուստածրագրի շրջանակներում խոսեց գյուղական բնակավայրերի անմխիթար վիճակի, գյուղատնտեսական վարկերի բարձր տոկոսադրույքների եւ գյուղացիների անվճարունակության բարձրացման մասին:

Քաղաքացիներ

2010 թվականի մայիս ամսին քաղաքացիների կողմից Արմեն Մարտիրոսյանին հասցեագրվել է 3 դիմում

Պաշտոնյաների եւ Հասարակական կազմակերպությունների կողմից հասցեագրված նամակներ

21.05 ՀՀ գլխավոր դատախազությունից՝ ի պատասխան Արմեն Մարտիրոսյանի ուղարկած գրության:

Արմեն Մարտիրոսյանի ելից նամակների թիվը, որից՝

Պաշտոնյաներին ուղղված՝ 4
Քաղաքացիներին ուղղված՝ 6